ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/206

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ի. Գասպարյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցման գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 55.110.1012700)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21364-2019 գրությամբ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.12.2019թ. թիվ Ե/01/660-19 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ 26/26-

1/21364-2019 գրությամբ նախաձեռնել է «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/206 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից 29.11.2019թ. կազմակերպված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) և գնային առաջարկով զբաղեցրել է առաջին տեղը:

Սակայն բանկի կողմից տրամադրվող բանկային երաշխիքի ուշացման պատճառով Ընկերությունը դիմել է Պատվիրատուի գնումների բաժնի, տվյալ Ընթացակարգի պատասխանատու՝ Ա. Բազեյանին, վերջինս էլ տեղեկացրել էր, որ մինչև 10.12.2019թ. ժամը 17:00-ն, այսինքն Ընթացակարգին անմիջապես հաջորդ օրը, բնօրինակը չներկայացնելու դեպքում՝ Ընկերության հայտը կմերժվի:

Հետևաբար չկարողանալով ժամանակին ներկայացնել երաշխիքը, Ընկերությունն ավտոմատ դուրս է մնացել գնման գործընթացից:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.12.2019թ. թիվ Ե/01/660-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի նոյեմբերի 29-ին հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2019 թվականի դեկտեմբերի 9-ին: Հայտերի

բացման նիստի արդյունքում, համաձայն ներկայացված գնային առաջարկների, 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել համապատասխանաբար «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն և «Շինարար-97» ՍՊԸ-ն (այսուհետ՝ միասին հիշատակման դեպքում՝ մասնակիցներ):

Հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էին ընթացակարգի հրավերով սահմանված Հավելված 1.1-ը և հայտի ապահովումը: «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանության շտկման մասին, սակայն, շտկումները չեն իրականացվել: Մասնավորապես, հայտի ապահովման բնօրինակը հրավերով սահմանված կարգով չի ներկայացվել Պատվիրատուին, իսկ Հավելված 1.1-ով սահմանված երաշխիքային ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

«ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին ներկայացվել է երաշխիքային ժամկետները շտկելու պահանջ, սակայն ընկերության կողմից շտկում չի իրականացվել և որևէ փաստաթուղթ չի ուղարկվել:

Վերոգրյալից ելնելով՝ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/206 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21364-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 19.12.2019թ. թիվ Ե/01/660-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի

«դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կոմիտեի կողմից իր կարիքների համար «Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտին կցված չէ հայտի ապահովումը և Հավելված 1.1.-ը:

Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է հավելված 1.1-ը, որում սահմանված երաշխիքային ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, իսկ հայտի ապահովման բնօրինակը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել, ուստի Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Այսպիսով՝ Հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախահաշվային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Նշված տեղեկատվությունը պետք է ներկայացվեր համաձայն N 1.1. հավելվածի:

Միևնույն ժամանակ հրավերով հաստատվել են շինարարական նյութերի և սարքավորումների երաշխիքային ժամկետների նվազագույն պահանջները:

Ընկերության կողմից որպես շտկում ներկայացված N 1.1. հավելվածում՝ առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագրում, երաշխիքային ժամկետները չեն

համապատասխանում հրավերով սահմանված երաշխիքային ժամկետների նվազագույն պահանջներին, մասնավորապես հետևյալ սարքերի և սարքավորումների մասով.

	Սարքերի և սարքավորումների անվանումը	Ընկերության կողմից նշված երաշխիքային ժամկետ	Հրավերով նախատեսված նվազագույն երաշխիքային ժամկետ
2	Մետաղապլաստ դուռ	2	3
3	Վինիլային հատակ	-	5
4	Կերամիկակական սալիկ	2	5
5	Լատեքսային ներկ	2	3
6	Կաֆել	2	5
7	Պոլիպրոպիլենային խողովակներ	2	5
8	Պոլիվինիլքլորիդե խողովակներ	2	5
9	Կերամիկական լվացարան, զուգարանակոնք	2	5
10	Էլ. Հաղորդալար ՊՊՎ 2x1,5	2	3
15	Կերամոգրանիտ	2	5

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման

ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ն «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21364-2019 գրությամբ «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**